# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
# «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան — 16-ը հունվարի 2019թ.
ժամը $11^{00}$

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան,

գնահատողներ՝

ՀՀ ԶՈՒ ԹՎ ՊԾ ՄՊ և ապահովման բաժնի պետ, փոխգնդապետ Ա. Մարգարյան

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի առաջատար ծառայող Ս. Պետրոսյան,

ՀՀ ԶՈՒ ԹՎ ՊԾ ՄՊ և ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Վ. Ասատրյան:

Քարտուղար՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Գ. Տերյան:

### « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

---

(Գ. Տերյան)

1. Մասնակիցների՝ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝4, դեմ՝ 0:*

### 1. Մասնակիցների՝ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

---

(Գ. Տերյան)

1.1 Քանի որ որակավորման փաստաթղթերը ներկայացնելուց հետո է պարզվել, որ մասնակիցը ընթացակարգին մասնակցել է կոնսորցիումի պայմանագրով ԱՐՄԿՈՖԵ ՍՊԸ հետ, ուստի ՀՀ ՖՆ 17.07.2019թ. պարզաբանման համաձայն գնահատող հանձնաժողովը 21.01.2019թ. որոշեց կոնսորցիումի մասնակցի վերաբերյալ կրկին հարցում կատարել ՀՀ պետական եկամուտների կոմիտե, որի պատասխանից հետո միայն գնահատել որակավորումը հիմնավորող փաստաթղթերը:

1.2 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/2» ծածկագրով ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ընթացակարգի շրջանակներում **առաջին տեղ զբաղեցրած մասնակցի** կողմից որակավորումը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ ներկայացրած նմանատիպ պայմանագրում և այդ պայմանագրի հանձնման-ընդունման արձանագրությունում որպես գնման առարկա նշված է փաթեթավորման ծառայության մատուցումը, այնինչ հարկային հաշիվներում գնման առարկան ապրանք է, ինչպես նաև վերոնշյալ պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող հանձնման-ընդունման արձանագրությամբ նշված մատակարարման ժամկետները չեն համապատասխանում հարկային հաշիվներով ապրանքների մատակարարման ժամկետներին: Ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և 25.01.2019թ. ծանուցել մասնակցին սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: Քանի որ մասնակիցը **դիմում-հայտարարության** մեջ չի նշել կոնսորցիումի անդամի իրական շահառուներին, գնահատող հանձնաժողովը որոշեց շտկում պահանջել մասնակցից: Սահմանված ժամկետում մասնակիցը ներկայացրել է պահանջվող **դիմում-հայտարարությունը և** ներկայացրել է բացատրություն «մասնագիտական փորձառությունը» հիմնավորող փաստաթղթերի անհամապատասխանությունների վերաբերյալ, որը գնահատող հանձնաժողովի կողմից չի համարվել վերոնշյալ անհամապատասխանությունների շտկում և 31.01.2019թ. գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԷՆԶԼ ՍՈՒՐ» ՍՊԸ հայտը մերժվել է:

*ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի 7041 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություններ, որը չի գերազանցում մասնակցի ներկայացրած գնի 1%-ը, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն առկա են:*

*ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն կոնսորցիումի մյուս անդամի՝ «ԱՐՄԿՈՖԵ» ՍՊԸ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն առկա են:*

Քանի որ «ԷՆՋԼ ՍՈՒՐ» ՍՊԸ հայտը մերժվել է գնահատող հանձնաժողովի որոշմամբ 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել ՍՄՕԳՍՕՅՈՒԶ ՍՊԸ:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգի հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ, ինչպես նաև ընթացակարգի հրավերի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

(Գ. Տերյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:*

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

(Գ. Տերյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրեն համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:*

| | |
|---|---|
| Գնահատող(ԳԱՊ) | Հ. Մելիքյան |
| Գնահատող | Ա. Մարգարյան |
| Գնահատող | Ս. Պետրոսյան |
| Գնահատող | Վ. Ասատրյան |
| Քարտուղար | Գ. Տերյան |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
## «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան — 07-ը փետրվարի 2019թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան,

գնահատողներ՝

ՀՀ ԶՈՒ ԹՎ ՊԾ ՄՊ և ապահովման բաժնի պետ, փոխգնդապետ Ա. Մարգարյան

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի առաջատար ծառայող Ս. Պետրոսյան,

ՀՀ ԶՈՒ ԹՎ ՊԾ ՄՊ և ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Վ. Ասատրյան:

*Քարտուղար՝*

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Գ. Տերյան:

### « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

---

(Գ. Տերյան)

1. Մասնակիցների՝ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝4, դեմ՝ 0:*

### 1. Մասնակիցների՝ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

---

(Գ. Տերյան)

1.1 «ՍՄՕԳՍՕՅՈՒԶ» ՍՊԸ /կոնսորցիում «Թրեյդ» ՍՊԸ հետ/ կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/2» ծածկագրով ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ընթացակարգի շրջանակներում որակավորումը հիմնավորող փաստաթղթերը ընդհանրապես չի ներկայացրել, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները «ՍՄՕԳՍՕՅՈՒԶ» ՍՊԸ հայտը գնահատող հանձնաժողովի կողմից մերժվել է:

*ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն կոնսորցիումի մյուս անդամի՝ «ՍՄՕԳՍՕՅՈՒԶ» ՍՊԸ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն նույնպես գնահատվել է անբավարար, քանի որ մասնակիցը չի ներկայացրել կոնսորցիումի պայմանագիրը և գնահատող հանձնաժողովը հնարավորություն չի ունեցել ճշտելու, թե կոնսորցիումի որ անդամն է ապահովելու «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը:*

Քանի որ Eauction համակարգը թույլ չէր տալիս մասնակիցներին մերժել որակավորումը հիմնավորող փաստաթղթերը ընդհանրապես չներկայացնելու հիմքով, ուստի լիազոր մարմնին հետադարձ կապով խնդրի լուծման վերաբերյալ խնդրանք է ներկայացվել: Լիազոր մարմնի առաջարկի հիման վրա, որպես խնդրի միակ լուծում, գնահատող հանձնաժողովը **www.eauction.armeps.am** կայքում մերժման ենթակա մասնակիցների ներկայացրած որակավորման փաստաթղթերը գնահատել է անբավարար, որից հետո վերջիններիս համակարգի կողմից ավտոմատ եղանակով ծանուցում է ուղարկվել՝ անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ: Անհամապատասխանությունների շտկման համար Օրենքով նախատեսված մեկ աշխատանքային օրվանից հետո գնահատող հանձնաժողովը կրկին անգամ մերժման ենթակա մասնակիցների ներկայացրած որակավորման փաստաթղթերը գնահատել է անբավարար:

Քանի որ «ՍՄՕԳՍՕՅՈՒԶ» ՍՊԸ հայտը մերժվել է 12.02.2019թ. գնահատող հանձնաժողովի որոշմամբ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը /հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին ընթացակարգը հայտարարվեց չկայացած:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

Գնահատող(ԳԱՊ) — Հ. Մելիքյան

Գնահատող — Ա. Մարգարյան

Գնահատող — Ս. Պետրոսյան

Գնահատող — Վ. Ասատրյան

Քարտուղար — Գ. Տերյան